Ծուշանիկ Կուրղինյան

Սիրեցեք միմյանց

Մի տարվեք գերի նախանձոտ տենչին,
Որ ատելության սերմեր է ցանում .
Մարդուն բանավոր իբրև մի չնչին
Խայթող իժ շինում միշտ, ամեն բանում:

Մի ձգտեք իշխել ձեզնից անզորին,
Դավերի ոստայն մի ձգեք կյանքում .
Հյուծվողի հյութը՝ ծծող հզորին
Ուշ թե անագան կը բերի լքում:

Մի առեք արյուն ուրիշի մարմնից՝
Իրավունք ունի ապրել ամեն մարդ .
Կրծող որդերը կաղնու հաստ բնից
Ողջը կքանդեն՝ կրծելով հանդարտ:

Մի ձգեք որոմ դավանանքների .
Կամ թե այլասեռ տգետ խտրության .
Երկունքը մեկ է . նույն տանջանքների,
Նույն բեռի տակ է մեծ ազգը մարդկան:

Սիրեցե՛ք միմյանց անկեղծ, անարատ,
Ո՛վ էլ որ լինեք, ուր էլ որ ապրեք .
Միայն այդ սիրով կյանքը մեղապարտ

Կարող է հաղթել՝ առանց արհավիրք:

1907 թ. 29 ապրիլի